



*Համարը N 86-Ն*

*Տեսակը Պաշտոնական  
Ինկորպորացիա*

*Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2017.02.08/9(1284)  
Հոդ.117*

*Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան*

*Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 09.02.2017*

*Ընդունման ամսաթիվը 02.02.2017  
Ստորագրման ամսաթիվը 06.02.2017  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☐ Օանուցում**

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

16.09.21 N 1499-Ն որոշումն ունի անցումային դրույթ:  
17.06.22 N 875-Ն որոշումն ունի անցումային դրույթ:

**☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ**

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2 փետրվարի 2017 թվականի N 86-Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 7-րդ մասերի, 11-րդ հոդվածի 5-րդ մասի, 12-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի, 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

**(նախարանը լրաց. 25.03.21 N 421-Ն)**

1. Մահմանել՝

1) զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դիմաց հատուցման գումար ստանալու համար դիմում ներկայացնելու, կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության մասին տեղեկանք տալու հատուցում ստանալու իրավունք ունեցող շահառու ճանաչելու, շահառուների շրջանակը որոշելու, շահառուների միջև համաձայնության առկայությունը, բացակայությունը կամ փոփոխությունը հիմնավորելու, հատուցման դեպքը և (կամ) դրա փոփոխությունը հաստատող փաստաթղթերը, զոհված (մահացած) կամ անհայտ կորած կամ հաշմանդամություն ունեցող զինծառայողի, հատուցում ստանալու իրավունք ունեցող շահառուների տվյալները, շահառուների շրջանակում կատարված փոփոխությունների, շահառուներին վճարվող հատուցման գումարի չափի վերաբերյալ տեղեկություններն իրավասու պետական մարմիններին և հատուցման հիմնադրամին տրամադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դիմաց վճարվող հատուցման գումարի ամսական հավասար վճարին ավելացվող ամսական լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքերը և դրանց փոփոխման մասին տեղեկությունները բացահայտելու, հավաքագրելու, մշակելու, այդ հիմքերը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու և դրանք իրավասու պետական մարմիններին ու հատուցման հիմնադրամին տրամադրելու, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի հիման վրա հատուցման հիմնադրամի կողմից ամսական լրացուցիչ գումար վճարելու որոշում ընդունելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված (մահացած) զինծառայողի ծնողի, ամուսնու և (կամ) զավակի (զավակների) դիմումի հիման վրա իրենց վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի պահած) որոշմանիշային վճարի գումարներն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձնելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

4) հարկային մարմնի կողմից հատուցման հիմնադրամին փոխանցվող՝ որոշմանիշային վճար վճարողների ցուցակների և հարկային մարմնի կողմից ֆինանսների ոլորտում կառավարության լիազորված մարմին ներկայացվող՝ որոշմանիշային վճարների գումարները հատուցման հիմնադրամ փոխանցելու վերաբերյալ հանձնարարականի տրամադրման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

5) որոշմանիշային վճարների պարտավորություններից ավելի վճարված գումարները վերադարձնելու կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:

**(1-ին կետը լրաց. 31.08.17 N 1077-Ն, լրաց., խմբ. 25.03.21 N 421-Ն)**

1.1. Մահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա զինծառայողի և շահառուի (շահառուների) նույնականացումն ապահովելու նպատակով բնակչության պետական ռեգիստրը վարող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը (Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը) միմյանց հետ փոխհամաձայնեցված կարգով և ձևաչափով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքով նախատեսված հատուցման հիմնադրամին է տրամադրում բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձի՝

1) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, տալու օրը, ամիսը, տարեթիվը, վավերականության ժամկետը, անձը հաստատող փաստաթուղթը տալու համար հիմք հանդիսացած փաստաթղթի (առկայության դեպքում) տեսակը, սերիան և համարը:

2) անունը, ազգանունը, հայրանունը, սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, իսկ մահվան դեպքում՝ մահվան օրը, ամիսը, տարեթիվը՝ առկայության դեպքում:

3) քաղաքացիությունը (երկքաղաքացու դեպքում՝ նաև այլ պետության քաղաքացիությունը), օտարերկրյա քաղաքացու դեպքում՝ կարգավիճակը (կացության կարգավիճակը կամ փախստական լինելը), քաղաքացիություն չունենալու դեպքում՝ կացության կարգավիճակը:

4) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայրի հասցեն, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվելու (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետության բնակչության վայրի հասցեով հաշվառված լինելու) դեպքում՝ օտարերկրյա պետությունում բնակության վայրի հասցեն:

5) սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված տվյալներում կատարված փոփոխությունները:

**(1.1-ին կետը լրաց. 25.03.21 N 421-Ն)**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Կ. Կարապետյան**

**2017 թ. փետրվարի 6  
Երևան**

**Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2017 թվականի  
փետրվարի 2-ի N 86-Ն որոշման**

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԴԻՄԱՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ ՏԱԼՈՒ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՀԱՌՈՒ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊԵԸ ԵՎ (ԿԱՍ) ԴՐԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԶՈՂՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԿԱՍ ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԿԱՍ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ, ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՍԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍԻՆ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ**

*(վերնագիրը լրաց. 25.03.21 N 421-Ն)*

1. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ օրենք) համապատասխան 2017 թվականի հունվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության, կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով (այսուհետ՝ մարտական գործողություններ) զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի (այսուհետ՝ հատուցման դեպք) դիմաց հատուցման գումար վճարելու հետ կապված հարաբերությունները:

*(1-ին կետը փոփ., լրաց. 25.06.20 N 1041-Ն)*

2. Օրենքով սահմանված հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում հատուցման գումար ստանալու համար հաշմանդամություն ունեցող զինծառայողը կամ օրենքով սահմանված այլ շահառու (շահառուները) ներկայացնում է դիմում՝ համաձայն NN 1 և 2 ձևերի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ համապատասխան պետական մարմին) սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանում: Դիմումը ներկայացվում է համապատասխան այն պետական մարմնին, որտեղ նախկինում ծառայել է հաշմանդամ դարձած, զոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողը, իսկ օրենքով սահմանված կամավորագրված անձի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն: Դիմումի հետ միասին ներկայացվում են՝

1) զինծառայողին հաշմանդամ ճանաչելու մասին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված տեղեկանքն ու ստացած վնասվածքի կամ խեղման պատճառական կապի մասին համապատասխան պետական մարմնի կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումը:

2) զինվորական ծառայությունից արձակվելուց, կամավորագրված անձի դեպքում՝ մարտական գործողությունների ավարտից հետո մահացած զինծառայողի մահվան պատճառական կապի մասին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված տեղեկանքը՝ մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով զինծառայողի մահացած լինելու վերաբերյալ:

3) օրենքով սահմանված կարգով զինծառայողին անհայտ բացակայող ճանաչվելու վերաբերյալ դատական ակտը:

4) հաշմանդամություն ունեցող զինծառայողի կամ օրենքով սահմանված շահառու հանդիսացող անձանց անձնագրերը (կամ նույնականացման քարտը):

5) օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ կամ 4.1-ին մասերով սահմանված շահառու հանդիսանալու հանգամանքը հաստատող՝ ամուսնության և ծննդյան վկայականները, դատական ակտերը, զինծառայողի՝ շահառու հանդիսացող քրոջ և եղբոր՝ ուսումնառության կամ հաշմանդամություն ունենալու վերաբերյալ տեղեկանքները՝ տրված համապատասխանաբար ուսումնական հաստատության կամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից, զինծառայողի ծնողների (ծնողի) մահվան վկայականները, զինծառայողի հետ համատեղ զավակ ունեցող անձի՝ զինծառայողի հետ ամուսնության և ամուսնալուծության պետական գրանցման բացակայության վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից տրամադրված տեղեկանքը:

6) օրենքով սահմանված շահառուների համաձայնությունը՝ հատուցման գումարը շահառուներից մեկի անունով բացված բանկային հաշվին փոխանցելու, կամ շահառուների ցանկությունը՝ հատուցման գումարը շահառուների միջև բաժանելու և նրանցից յուրաքանչյուրին առանձին վճարելու վերաբերյալ: Սույն ենթակետի ապահովման նպատակով յուրաքանչյուր շահառու համապատասխան գրառում է կատարում սույն կարգի NN 1 և 2 ձևերում նշված դիմումներում:

*(2-րդ կետը փոփ., լրաց. 26.10.20 N 1721-Ն, փոփ. 13.05.21 N 775-Ն, փոփ., լրաց. 13.05.22 N 666-Ն)*

2.1. Ռազմական դրության ժամանակ զինծառայողի կյանքին պատճառված վնասի դեպքում սույն կարգով սահմանված գործընթացը կարող է իրականացվել նաև համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման նախաձեռնությամբ, որի շրջանակներում այդ ստորաբաժանումը, համագործակցելով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ապահովում է հատուցման դեպքի

հանգամանքների և օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պայմանների բացակայության վերաբերյալ քրեական վարույթ իրականացնող մարմնի գրության ու սույն կարգի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերի ստացումը և սույն կարգի 4-րդ կետի պահանջների համաձայն անհրաժեշտ փաստաթղթերի ու անվանացուցակների ներկայացումը հատուցման հիմնադրամին: Օրենքով սահմանված կամավորագրված անձի դեպքում փաստաթղթերին կցվում է նաև մարտական գործողություններին մասնակցության մասին տեղեկատվությունը՝ տրված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանման կողմից՝ համաձայն N 2.1 ձևի կամ այլ ձևով: Սույն կարգի համաձայն հատուցման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պայմանների առկայության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու դեպքում օրենքով սահմանված հատուցման գումարի վճարումը դադարեցվում է՝ այդ տեղեկատվությունն ստանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ համապատասխան շահառուի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կարգով:

**(2.1-ին կետը լրաց. 26.10.20 N 1721-Ն, փոփ., լրաց. 25.03.21 N 421-Ն, փոփ. 13.05.21 N 775-Ն, 13.05.22 N 666-Ն)**

2.2. Օրենքով սահմանված կամավորագրված անձի դեպքում մարտական գործողություններին մասնակցության մասին տեղեկանքը տրվում է կամավորագրված անձի զինվորական հաշվառումն իրականացնող կամ իրականացրած (եթե կամավորագրված անձն օրենքով սահմանված դեպքերում հանվել է զինվորական հաշվառումից)՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողի կամ օրենքով սահմանված այլ շահառուի դիմումն այդ ստորաբաժանումում սահմանված կարգով մուտք լինելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության հանգամանքի, ժամկետի և վայրի վերաբերյալ համապատասխան տարածքային ստորաբաժանումում առկա չեն տվյալներ, ապա դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է դիմումատուին, իսկ տեղեկանքը տրվում է դիմումը մուտք լինելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության հանգամանքի, ժամկետի և վայրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը համապատասխան տարածքային ստորաբաժանումն ստանում է գորհամատեր կատարված հարցումների միջոցով: Տեղեկանքը կազմվում է երկու օրինակից, առաջին օրինակը տրվում է դիմումատուին, իսկ երկրորդ օրինակը պահվում է համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

**(2.2-րդ կետը լրաց. 25.03.21 N 421-Ն)**

3. Եթե օրենքով սահմանված հատուցման դեպք տեղի ունենալու օրվա դրությամբ առկա է նաև օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումար ստանալու իրավունք, ապա սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումին կցվում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 2 հավելվածում նշված դիմումը և փաստաթղթերը:

4. Համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը դիմումը և կից փաստաթղթերն ստանալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում՝

1) պարզում է, թե՝

ա. տվյալ հատուցման դեպքով ով է հանդիսանում շահառու (շահառուներ)՝ հիմք ընդունելով օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ կամ 4.1-ին մասերը և հաշվի առնելով քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տեղեկությունները,

բ. որքան է կազմում հատուցման դեպքով վճարման ենթակա հատուցման գումարի չափը և

2) հիմք ընդունելով ստացված դիմումը, կից փաստաթղթերն ու տեղեկությունները (ներառյալ դեպքի վերաբերյալ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսված՝ մինչդատական վարույթ իրականացնող մարմնի տրամադրված տեղեկությունները)՝ ծրագրային գործիքի միջոցով՝

ա. զինծառայողին և շահառուին (շահառուներին) նույնականացնում է բնակչության պետական ռեգիստրում և կազմում է հաշմանդամություն ունեցող զինծառայողի կամ գոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի հատուցման իրավունքի էլեկտրոնային գործ,

բ. էլեկտրոնային գործում ներառում է դիմումատուի ներկայացրած տեղեկությունները, ինչպես նաև սքանավորման միջոցով, ներկայացրած փաստաթղթերը՝ բնօրինակ փաստաթղթերը վերադարձնելով դիմումատուին,

գ. հատուցման դեպքի վերաբերյալ տեղեկությունները և շահառուների անվանացանկը՝ համաձայն NN 3 և 4 ձևերի, էլեկտրոնային եղանակով ուղարկում է հատուցման հիմնադրամին:

**(4-րդ կետը լրաց. 31.08.17 N 1077-Ն, խմբ. 25.03.21 N 421-Ն, լրաց. 13.05.21 N 775-Ն, փոփ. 13.05.22 N 666-Ն)**

4|11| Ընդ որում, եթե շահառու հանդիսանալու հանգամանքը հաստատվում է ծննդյան վկայականի հիման վրա, և ծննդյան վկայականում նշված՝ անձի հոր մասին տվյալները նույնական են ներկայացված անձը հաստատող փաստաթղթում նշված տվյալներին կամ զինծառայողի տվյալներին, ապա անձի հայրությունը որոշելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ (փաստաթղթեր) չեն պահանջվում՝ բացառությամբ այն դեպքի, երբ որոշվում է միակ շահառուն կամ առկա է այլ տեղեկատվություն անձի հայրությունը որոշելու վերաբերյալ:

**(4.1-ին կետը լրաց. 13.05.21 N 775-Ն)**

5. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ծրագրային գործիքն սպասարկում (վարում) է հիմնադրամը, իսկ

Էլեկտրոնային գործում ներառված տեղեկությունները հասանելի են հիմնադրամին:

**(5-րդ կետը խմբ. 25.03.21 N 421-Ն)**

6. Սույն կարգի համաձայն շահառուների շրջանակում կատարված փոփոխություններ են համարվում`

- 1) օրենքով սահմանված նոր շահառուի ի հայտ գալը.
- 2) օրենքով սահմանված շահառուի մահանալը.
- 3) օրենքով սահմանված շահառու հանդիսանալու հիմք տվող հանգամանքը վերանալը:

7. Սույն կարգի 6-րդ կետի համաձայն շահառուների շրջանակում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում են նոր շահառուի կամ նրա օրինական ներկայացուցչի կամ նրա կողմից լիազորված անձի կամ այլ շահառուի կողմից` օրենքով սահմանված կարգով հատուցման գումարը շահառուների թվի վրա հավասարաչափ բաժանելու համար: Սույն կետի համաձայն նոր շահառու կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված անձը կամ այլ շահառու ներկայացնում է դիմում` համաձայն N 5 ձևի, համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանում, դիմումին կցելով փոփոխությունները հիմնավորող փաստաթղթերը (ծննդյան վկայականը, մահվան վկայականը, դատական ակտը, ուսումնական հաստատության կամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված համապատասխան տեղեկանքները):

711 Համապատասխան պետական մարմնի սոցիալական խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը, ինչպես նաև հատուցման հիմնադրամը` իր նախաձեռնությամբ, շահառուի մահվան վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից` Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված օպերատորի միջոցով:

**(7.1-ին կետը լրաց. 17.06.22 N 875-Ն)**

8. Շահառուների շրջանակում կատարված փոփոխությունների վերաբերյալ ստացված դիմումը և փաստաթղթերը, ներառյալ սույն կարգի 7.1-ին կետում նշված տեղեկատվությունը, համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը եռօրյա ժամկետում հաշվառում է սույն կարգի 5-րդ կետի համաձայն` հաշմանդամություն ունեցող զինծառայողի կամ գոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի հատուցման իրավունքի գործում, և գրանցման օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ձևաչափով (ծրագրային գործիքի միջոցով) ուղարկում է հատուցման հիմնադրամին:

**(8-րդ կետը լրաց. 25.03.21 N 421-Ն, 17.06.22 N 875-Ն)**

9. Եթե հատուցման վճարը նշանակելուց հետո նույն զինծառայողի կապակցությամբ տեղի է ունենում օրենքով սահմանված հատուցման դեպքի փոփոխություն, ապա հատուցման նոր դեպքն օրենքով սահմանված կարգով որոշվելու (հաստատվելու) օրվանից հետո երկշաբաթյա ժամկետում համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը սույն կարգի պահանջների համաձայն անհրաժեշտ տեղեկատվությունն ուղարկում է հատուցման հիմնադրամին:

10. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի, 7.1-ին, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերի համաձայն ստացված փաստաթղթերում (տեղեկություններում) թերություններ և (կամ) անճշտություններ հայտնաբերելու դեպքում հատուցման հիմնադրամը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը` նշելով հայտնաբերված թերությունները և (կամ) անճշտությունները: Համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը պարտավոր է տեղեկատվությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և (կամ) անճշտությունները և համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնել հատուցման հիմնադրամ: Ընդ որում, օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված 3 աշխատանքային օրվա հաշվարկն սկսվում է ճշգրտված փաստաթղթերը (տեղեկությունները) հատուցման հիմնադրամում մուտք լինելու օրվանից:

**(10-րդ կետը լրաց. 17.06.22 N 875-Ն)**

11. Եթե սույն կարգի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն հատուցման գումարն օրենքով սահմանված շահառուներից մեկի անունով բացված բանկային հաշվին փոխանցելուց հետո օրենքով սահմանված շահառուներից որևէ մեկը դիմում է ներկայացնում հատուցման հիմնադրամին` իրեն հասանելիք գումարի չափն առանձնացնելու և առանձին վճարելու վերաբերյալ, ապա հատուցման հիմնադրամը դիմումն ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով իրականացնում է հատուցման գումարի բաժանումը և առանձին վճարումը:

121 Հատուցման հիմնադրամը սույն կարգի 8-րդ կետով սահմանված կարգով շահառուի մահվան վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու դեպքում մահացած շահառուին վճարման ենթակա հատուցման գումարը շահառուի մահվան ամսին հաջորդող ամսվա 1-ից հավասարաչափ բաժանում է մնացած շահառուների միջև: Ընդ որում, եթե մահացած շահառուի միջոցով վճարվել է նաև այլ շահառուի հատուցման գումար, ապա այլ շահառուին վճարման ենթակա հատուցման գումարները շարունակվում են վճարվել վերջինիս անունով բացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

**(12-րդ կետը լրաց. 17.06.22 N 875-Ն)**

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Ձև N 1

-----  
(համապատասխան պետական մարմնի

-----  
սոցիալական ապահովության խնդիրներ

-----  
իրականացնող ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԴԻՄԱՅ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հայտնում եմ Ձեզ, որ \_\_\_\_\_  
(հաշմանդամություն ունեցող զինծառայողի ծառայության տեսակը, զինվորական

կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն)

(գորմանս, վնասվածք կամ խեղում ստանալու օրը, ամիսը, տարին, վայրը և պատճառը)

(հաշմանդամության խումբը և հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանք տալու օրը,

ամիսը, տարին, համարը, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին)

\_\_\_\_\_  
: (պատճառական կապի վերաբերյալ ԿՌԲՀ որոշման կայացման օրը, ամիսը, տարին, համարը)

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

Դիմումի դարձերես

3. Խնդրում եմ ինձ հատկացնել օրենքով սահմանված հատուցման գումար՝ վճարումն իրականացնելով իմ անունով բանկում բացված հաշվեհամարին:

4. Հատուցման գումարն ստանալու իրավունք ունեցող շահառուներն են՝

Շահառու (ազգակցական կապը, իսկ քրոջ և եղբոր դեպքում՝ նաև կարգավիճակը, վերջիններիս բացակայության դեպքում՝ այլ անձը)	Շահառուի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն, հեռախոսահամարը (էլեկտրոնային հասցե)	Շահառուների համաձայնությունը՝ հատուցման գումարը շահառուներից մեկին հատկացնելու կամ ցանկությունը՝ հատուցման գումարի բաժանելու վերաբերյալ	Շահառուի (շահառուների) ստորագրությունը
1	2	3	4

1) աղյուսակը լրացվում է այն դեպքում, եթե մտավոր կամ հոգեկան անկարողության հետևանքով դիմումը չի ներկայացվել հաշմանդամություն ունեցող զինծառայողի կողմից.

2) աղյուսակի 1-ին սյունակում քրոջ և եղբոր կարգավիճակը լրացվում է՝

ա. մինչև 18 տարեկան՝ նշվում է ծննդյան օրը, ամիսը, տարին, ծննդյան վկայականի համարը,

բ. 18 տարին լրացած և անգործունակ՝ նշվում է անգործունակ ճանաչելու մասին դատական ակտի կայացման օրը, ամիսը, տարին, համարը,

գ. մինչև 23 տարեկան և առկա ուսուցմամբ սովորող՝ նշվում է ուսումնական հաստատության տեղեկանքի տրման օրը, ամիսը, տարին, համարը,

դ. 18 տարին լրացած և հաշմանդամություն ունեցող՝ նշվում է հաշմանդամության խումբը և հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին, զինծառայողին խնամակալ ճանաչելու մասին իրավասու մարմնի որոշման օրը, ամիսը, տարին, համարը, ծնողների մահվան վկայականներ տալու օրը, ամիսը, տարին, համարները կամ ծնողների հաշմանդամության խումբը և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը, հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանքներ տալու օրը, ամիսը, տարին, համարները, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին.

3) աղյուսակի 1-ին սյունակում այլ անձանց վերաբերյալ լրացվում է՝

ա. դատական ակտի կայացման օրը, ամիսը, տարին, համարը,

բ. հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին կամ աշխատանքային կենսաթոշակ ստանալու հանգամանքը հաստատող տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը.

4) աղյուսակի 3-րդ սյունակում յուրաքանչյուր շահառուի մասով նշվում են՝

ա. «Համաձայն եմ գումարը շահառուներից մեկին (նշվում է տվյալ շահառուի անունը, հայրանունը, ազգանունը) հատկացմանը» կամ

բ. «Ինձ հասանելիք գումարն առանձնացնել և հատկացնել ինձ».

5) աղյուսակի 4-րդ սյունակում յուրաքանչյուր շահառու անձամբ ստորագրում է իր մասի դիմաց:

Դիմող \_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

**Ձև N 2**

-----  
(համապատասխան պետական մարմնի

-----  
սոցիալական ապահովության խնդիրներ

-----  
իրականացնող ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ԶԻՆՇԱՌԱՅՈՂԻ ԿՅԱՆՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԴԻՄԱՑ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ**

1. Հայտնում եմ Ձեզ, որ \_\_\_\_\_

(գրիված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի ծառայության տեսակը,

կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն)

(գորամասը, գրիվելու (մահանալու) կամ անհայտ կորելու օրը, ամիսը, տարին)

(գրիվելու (մահանալու) կամ անհայտ կորելու վայրը և պատճառը, մահվան վկայական

տալու օրը, ամիսը, տարին համարը, անհայտ բացակայող ճանաչելու մասին դատական ակտի

կայացման օրը, ամիսը, տարին և համարը)

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

Դիմումի դարձերես

3. Հատուցման գումարն ստանալու իրավունք ունեցող շահառուներն են՝

Շահառու (ազգակցական կապը, իսկ քրոջ և եղբոր դեպքում՝ նաև կարգավիճակը, վերջիններիս բացակայության դեպքում՝ այլ անձը)	Շահառուի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն, հեռախոսահամարը (էլեկտրոնային հասցե)	Շահառուների համաձայնությունը՝ հատուցման գումարը շահառուներից մեկին հատկացնելու կամ ցանկությունը՝ հատուցման գումարի բաժանելու վերաբերյալ	Շահառուի (շահառուների) ստորագրությունը
1	2	3	4

1) աղյուսակի 1-ին սյունակում քրոջ և եղբոր կարգավիճակը լրացվում է՝

ա. մինչև 18 տարեկան՝ նշվում է ծննդյան օրը, ամիսը, տարին, ծննդյան վկայականի համարը,

բ. 18 տարին լրացած և անգործունակ, նշվում է անգործունակ ճանաչելու մասին դատական ակտի կայացման օրը, ամիսը, տարին, համարը,

գ. մինչև 23 տարեկան և առկա ուսուցմամբ սովորող՝ նշվում է ուսումնական հաստատության տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը,

դ. 18 տարին լրացած և հաշմանդամություն ունեցող՝ նշվում է հաշմանդամության խումբը և հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին, զինծառայողին խնամակալ ճանաչելու մասին իրավասու մարմնի որոշման օրը, ամիսը, տարին, համարը, ծնողների մահվան վկայականներ տալու օրը, ամիսը, տարին, համարները կամ ծնողների հաշմանդամության խումբը և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը, հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանքներ տալու օրը, ամիսը, տարին, համարները, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին.

2) աղյուսակի 1-ին սյունակում այլ անձանց վերաբերյալ լրացվում է՝

ա. դատական ակտի կայացման օրը, ամիսը, տարին, համարը.



բ. հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին կամ աշխատանքային կենսաթոշակ ստանալու հանգամանքը հաստատող տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը.

3) աղյուսակի 3-րդ սյունակում յուրաքանչյուր շահառուի մասով նշվում են՝

ա. «Համաձայն եմ գումարը շահառուներից մեկին (նշվում է տվյալ շահառուի անունը, հայրանունը, ազգանունը) հատկացմանը» կամ

բ. «Ինձ հասանելիք գումարն առանձնացնել և հատկացնել ինձ».

4) աղյուսակի 4-րդ սյունակում յուրաքանչյուր շահառու անձամբ ստորագրում է իր մասի դիմաց:

Դիմող

-----  
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

26 N 2.1

դրոշմակնիքի տեղ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության մասին**

Տրվում է առ այն, որ

----- -ը  
(անունը, հայրանունը, ազգանունը)

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության

----- -ում հաշվառված է որպես կամավոր հիմունքներով  
(տարածքային ստորաբաժանումը)

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած անձ (այսուհետ՝ կամավորագրված անձ): Կամավորագրված անձի կողմից մարտական գործողություններին մասնակցությունը հաստատված է մարտական գործողություններին մասնակցության հանգամանքի, ժամկետի և վայրի վերաբերյալ առկա տվյալներով:

**Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գորակոչային և գորահավաքային**

**համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման  
ղեկավար** \_\_\_\_\_

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

\_\_\_\_\_ 20 թ.

(ձևը լրաց. 25.03.21 N 421-Ն)

26 N 3

**Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ**

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԴԻՄԱՑ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ**

Հաշմանդամություն ունեցող զինծառայողի ծառայության տեսակը, զինվորական կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին	Վնասվածք կամ խեղում ստանալու օրը, ամիսը, տարին	Հաշմանդամության խումբը վերափորձաքննության օրը, ամիսը, տարին	<i>(սյունակն ուժը կորցրել է 25.03.21 N 421-Ն)</i>	Օրենքով սահմանված հատուցման գումարի չափը	Հատուցման գումարն ստանալու իրավունք ունեցող շահառուներ			Հատուցման գումար ստացողի անունը, հայրանունը, ազգանունը
					շահառու (ազգական կապը, իսկ քրոջ և եղբոր դեպքում՝ նաև կարգավիճակը, վերջիններիս բացակայության դեպքում՝ այլ անձը)	շահառուի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն, հեռախոսահամարը (էլեկտրոնային հասցե)	շահառուների համաձայնությունը՝ հատուցման գումարը շահառուներից մեկին հատկացնելու կամ ցանկությունը՝ հատուցման գումարի բաժանելու վերաբերյալ	
1	2	3	4	5	6	7	8	9

1) աղյուսակի 6-րդ, 7-րդ և 8-րդ սյունակները լրացվում են այն դեպքում, եթե մտավոր կամ հոգեկան անկարողության հետևանքով դիմումը չի ներկայացվել հաշմանդամություն ունեցող զինծառայողի կողմից:

2) աղյուսակի 6-րդ, 7-րդ և 8-րդ սյունակները լրացվում են հատուցում նշանակելու դիմումում առկա աղյուսակի լրացման կարգով:

3) աղյուսակի 9-րդ սյունակում նշվում է հաշմանդամություն ունեցող զինծառայողի, իսկ Աղյուսակի 6-րդ, 7-րդ և 8-րդ սյունակների լրացման դեպքում՝ գումարն ստացող շահառուի (շահառուների) անունը, հայրանունը, ազգանունը:

Համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար \_\_\_\_\_ 20 թ.  
 (ստորագրությունը, անունը, ազգանունը, կնիքը)

*(ձևը փոփ. 25.03.21 N 421-Ն)*

Ձև N 4

**Ա Ն Վ Ա Ն Ա Յ Ա Ն Կ**

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՅԱՆՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄԻ ԴԻՄԱՅ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ**

Զոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի ծառայության տեսակը, զինվորական կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին	Զոհվելու (մահանալու) կամ անհայտ կորելու օրը, ամիսը, տարին	( <i>սյունակն ուժը կորցրել է 25.03.21 N 421-Ն</i> )	( <i>սյունակն ուժը կորցրել է 25.03.21 N 421-Ն</i> )	Օրենքով սահմանված հատուցման գումարի չափը	Հատուցման գումարը ստանալու իրավունք ունեցող շահառուներ			Հատուցման գումար ստացողի անունը, հայրանունը, ազգանունը
		շահառու (ազգական կապը, իսկ քրոջ և եղբոր դեպքում՝ նաև կարգավիճակը, վերջիններիս բացակայության դեպքում՝ այլ անձը)	շահառուի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն, հեռախոսահամարը (էլեկտրոնային հասցե)		շահառուների համաձայնությունը՝ հատուցման գումարը շահառուներից մեկին հատկացնելու կամ ցանկությունը՝ հատուցման գումարի բաժանելու վերաբերյալ			
1	2	3	4	5	6	7	8	9

1) աղյուսակի 6-րդ, 7-րդ և 8-րդ սյունակները լրացվում են հատուցում նշանակելու դիմումում առկա աղյուսակի լրացման կարգով.

2) աղյուսակի 9-րդ սյունակում նշվում է գումար ստացող յուրաքանչյուր շահառուի (շահառուների) անունը, հայրանունը, ազգանունը:

Համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար  
(*ձևը փոփ. 25.03.21 N 421-Ն*)

-----  
(ստորագրությունը, անունը, ազգանունը, կնիքը) \_\_\_\_\_ 20 թ.

**Ձև N 5**

-----  
(համապատասխան պետական մարմնի

-----  
սոցիալական ապահովության խնդիրներ

-----  
իրականացնող ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը)

**Դ Ի Մ Ո Ւ Մ**

**ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. Հայտնում եմ Ձեզ, որ \_\_\_\_\_

(գոհված (մահացած) կամ անհայտ կորած կամ հաշմանդամություն

ունեցող զինծառայողի անունը, հայրանունը, ազգանունը)

(կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դիմաց հատուցման հիմնադրամի կողմից

հատուցում նշանակելու որոշման օրը, ամիսը, տարին, որոշման համարը)

համաձայն հատուցում ստանալու ընթացքում շահառուների շրջանակում տեղի է ունեցել փոփոխություն՝

(նոր շահառուի ի հայտ գալու հանգամանքները կամ շահառուի մահը կամ

շահառու հանդիսանալու հիմք տվող հանգամանքը վերանայլը)

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

Դիմումի դարձերես

3. Շահառուների շրջանակում կատարված փոփոխությունների արդյունքում հատուցման գումարը ստանալու իրավունք ունեցող շահառուներն են՝

Նոր շահառուի կամ մահացած շահառուի կամ այլևս շահառու չհանդիսացող անձի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն, հեռախոսահամարը (ազգակցական կապը, իսկ քրոջ և եղբոր դեպքում՝ նաև կարգավիճակը)	Շահառուների համաձայնությունը՝ հատուցման գումարը շահառուներից մեկին հատկացնելու կամ ցանկությունը՝ հատուցման գումարի բաժանելու վերաբերյալ	Շահառուի ստորագրությունը
1	2	3

1) աղյուսակը լրացվում է հատուցում նշանակելու դիմումում առկա աղյուսակի լրացման կարգով.

Դիմող \_\_\_\_\_ 20 թ.  
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(հավելվածը լրաց. 31.08.17 N 1077-Ն, փոփ., լրաց. 25.06.20 N 1041-Ն, 26.10.20 N 1721-Ն, լրաց., փոփ., խմբ. 25.03.21 N 421-Ն, փոփ., լրաց. 13.05.21 N 775-Ն, 13.05.22 N 666-Ն, լրաց. 17.06.22 N 875-Ն)

Կ Ա Ր Գ

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԴԻՄԱՅ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՎՃԱՐԻՆ ԱՎԵԼԱՑՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ, ՀԱՎԱՔԱԳՐԵԼՈՒ, ՄՇԱԿԵԼՈՒ, ԱՅՂ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԻՐԱՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՈՒ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՄՍԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ օրենք) համապատասխան վճարվող հատուցման գումարի ամսական հավասար վճարին ավելացվող ամսական լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքերի վերաբերյալ տեղեկությունների ստացման և հաշվառման, այդ հիմքերի վերաբերյալ փաստաթղթերի ներկայացման և դրանց հիման վրա ամսական լրացուցիչ գումար վճարելու հետ կապված հարաբերությունները:

2. Օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումար ստանալու իրավունքի առկայության պարագայում ամսական լրացուցիչ գումար ստանալու համար հաշմանդամություն ունեցող զինծառայողը, իսկ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դեպքում՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողի ամուսինը կամ զինծառայողի՝ օրենքով սահմանված 18 տարին չլրացած երեխաների կամ չափահաս զավակների խնամքով զբաղվող այլ անձը, ինչպես նաև զոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի ամուսինը կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված անձը, իսկ այդպիսիք չլինելու դեպքում՝ զինծառայողի՝ օրենքով սահմանված 18 տարին չլրացած երեխաների կամ չափահաս զավակների խնամքով զբաղվող այլ անձը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 1 հավելվածում նշված համապատասխան պետական մարմնի սցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանում է ներկայացնում դիմում՝ համաձայն N 1 ձևի: Դիմումի հետ միասին ներկայացվում են՝

- 1) օրենքով սահմանված 18 տարին չլրացած երեխաների կամ չափահաս զավակների ծննդյան վկայականները,
- 2) չափահաս զավակների՝ ուսումնառության մեջ գտնվելու և ուսումնառության ժամկետի, կամ հաշմանդամություն ունենալու վերաբերյալ տեղեկանքները՝ տրված համապատասխանաբար ուսումնական հաստատության կամ բժշկասցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից,
- 3) երրորդ երեխայի սաղմնավորման օրվա և հղիության ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկանք՝ տրված երեխայի մոր հղիության ընթացքը գրանցած բժշկական հաստատության կողմից: Ընդ որում, սույն կետում նշված տեղեկանքը ներկայացվում է միայն զոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի երեխայի մասով,
- 4) զինծառայողի և երեխայի մոր ամուսնության վկայականը, ինչպես նաև ամուսնալուծության հիմքով այդ ամուսնությունը դադարած չլինելու վերաբերյալ տեղեկանք՝ տրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից: Ընդ որում, սույն կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են միայն զոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի երեխայի մասով,
- 5) օրենքով սահմանված 18 տարին չլրացած երեխաների կամ չափահաս զավակների նկատմամբ խնամակալություն հաստատված լինելու դեպքում՝ խնամակալության վերաբերյալ փաստաթուղթը և խնամակալի անձնագիրը, ինչպես նաև զինծառայողի կամ նրա ամուսնու կամ նրա օրինական ներկայացուցչի կամ լիազորված անձի անձնագիրը,
- 6) օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված դեպքերում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը,
- 7) չափահաս զավակների համաձայնությունը՝ ամսական լրացուցիչ գումարը սույն մասում նախատեսված անձանցից որևէ մեկի անունով բացված բանկային հաշվին փոխանցելու, կամ նրանց ցանկությունը՝ ամսական լրացուցիչ գումարի իրենց հասանելիք չափին առանձնացնելու և նրանցից յուրաքանչյուրին առանձին վճարելու վերաբերյալ: Սույն ենթակետի ապահովման նպատակով յուրաքանչյուր շահառու համապատասխան գրառում է կատարում սույն կարգի N 1 ձևում նշված դիմումում:

3. Համապատասխան պետական մարմնի սցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից սույն կարգի 2-րդ կետում նախատեսված փաստաթղթերի հաշվառումը և հատուցման հիմնադրամին տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 1 հավելվածում սահմանված կարգով և ժամկետներում:

4. Հատուցման հիմնադրամն օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարը վճարելու որոշում կայացնում է համապատասխան պետական մարմնի սցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից ներկայացված փաստաթղթերը հատուցման հիմնադրամում մուտք լինելու օրվանից հետո եռօրյա ժամկետում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 1 հավելվածի 10-րդ կետի դրույթները: Հատուցման հիմնադրամի կողմից օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարի վճարումն իրականացվում է սույն կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն:

5. Եթե օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարը վճարելու ընթացքում զինծառայողն ունենում է նոր երեխա,

կամ լրացել է երեխայի 18 տարին և նա սովորում է առկա ցերեկային ուսուցմամբ կամ նա ունի հաշմանդամություն, որը սահմանվել է մինչև նրա 18 տարին լրանալը, ապա համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանում են ներկայացվում համապատասխանաբար սույն կարգի N 1 ձևով նախատեսված նոր դիմում, նոր ծնված երեխայի ծննդյան վկայականը, ուսումնառության և հաշմանդամություն ունենալու վերաբերյալ տեղեկանքները, որոնք համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից սույն կարգի 3-րդ կետի համաձայն տրամադրվում են հատուցման հիմնադրամին: Ընդ որում, եթե սույն կետի շրջանակներում առկա է սույն կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված՝ ամսական լրացուցիչ գումարն առանձնացնելու դեպք, ապա հատուցման հիմնադրամն իրականացնում է ամսական լրացուցիչ գումարի վճարման վերահաշվարկ՝ համապատասխան չափերով: Սույն կետում սահմանված պայմանների վերաբերյալ համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումը գրավոր տեղեկացնում է սույն կարգի 2-րդ կետի համաձայն դիմում ներկայացրած անձին՝ վերջինիս կողմից դիմումը ներկայացնելու ժամանակ:

6. Եթե օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարի վճարումը հատուցման հիմնադրամի կողմից դադարեցվել է օրենքով սահմանված 18 տարին չլրացած երեխայի կամ չափահաս զավակի մահվան կամ երեխայի 18 տարին լրանալու կամ ուսանող չափահաս զավակի՝ ուսումնառությունը դադարեցնելու կամ 23 տարին լրանալու կամ ուսուցման ձևը փոխելու հիմքով, և՝

1) զինծառայողն ունենում է նոր երեխա, կամ

2) չափահաս զավակը մինչև 23 տարին լրանալը վերականգնվում է ուսումնական հաստատությունում կամ կրկին տեղափոխվում է առկա ցերեկային ուսուցմամբ համակարգ,

ապա օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարի վճարումն իրականացվում է սույն կարգի պահանջների համաձայն: Եթե օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարի վճարումը հատուցման հիմնադրամի կողմից դադարեցվել է հաշմանդամություն ունեցող չափահաս զավակի՝ հաշմանդամություն ունեցող չճանաչվելու հիմքով, ապա հետագայում նշված անձին կրկին անգամ հաշմանդամություն ունեցող ճանաչելը չի հանգեցնում օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարի վճարման պարտավորության՝ բացառությամբ եթե հաշմանդամություն ունեցող չճանաչելու որոշումը բողոքարկման արդյունքում փոփոխվել է, և անձը կրկին ճանաչվել է հաշմանդամություն ունեցող:

7. Օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումարը վճարելու որոշում կայացնելու օրվանից հետո 15-օրյա ժամկետում հատուցման հիմնադրամը՝

1) օրենքով սահմանված անչափահաս երեխաների կամ չափահաս զավակների վերաբերյալ տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն, ծննդյան վկայականի համարը և սերիան, անձնագրի ունենալու դեպքում՝ անձնագրի համարը և սերիան, պատշաճ ձևով ուղարկում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման կենտրոնական մարմին՝ օրենքով սահմանված անչափահաս երեխայի կամ չափահաս զավակի մահվան պետական գրանցում իրականացվելու դեպքում քաղաքացիական կացության ակտերի գրանցման կենտրոնական մարմնի կողմից մահվան պետական գրանցման օրվանից ետոյա ժամկետում դրա մասին հատուցման հիմնադրամին տեղեկացնելու համար:

2) ուսանող չափահաս զավակի վերաբերյալ տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն, անձնագրի համարը և սերիան, պատշաճ ձևով ուղարկում է այն ուսումնական հաստատություն, որտեղ սովորում է անձը՝ վերջինիս ուսումնառությունը դադարեցվելու կամ ուսուցման ձևը փոխելու դեպքում ուսումնական հաստատության կողմից ուսումնառությունը դադարեցվելու կամ ուսուցման ձևը փոխելու օրվանից ետոյա ժամկետում դրա մասին հատուցման հիմնադրամին տեղեկացնելու համար:

3) հաշմանդամություն ունեցող չափահաս զավակի վերաբերյալ տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն, անձնագրի համարը և սերիան, հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը, պատշաճ ձևով ուղարկում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմին՝ հաշմանդամություն ունենալու ժամկետը երկարաձգվելու կամ հաշմանդամություն ունեցող չճանաչվելու դեպքում բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամություն ունենալու ժամկետը երկարաձգելու կամ հաշմանդամություն ունեցող չճանաչելու օրվանից ետոյա ժամկետում դրա մասին հատուցման հիմնադրամին տեղեկացնելու համար:

8. Սույն կարգի 7-րդ կետի համաձայն ստացված տեղեկությունները հատուցման հիմնադրամը փոխանցում է նաև համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանում՝ զինծառայողի ապահովագրական գործում հաշվառելու համար:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

-----  
(համապատասխան պետական մարմնի

-----  
սոցիալական ապահովության խնդիրներ

-----  
իրականացնող ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ԱՄՍԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ**

1. Հայտնում եմ Ձեզ, որ \_\_\_\_\_

(հաշմանդամ ճանաչված կամ գոհված (մահացած) կամ անհայտ կորած զինծառայողի

անունը, հայրանունը, ազգանունը, զինծառայողի կամ այլ դիմումատուի անձնագրի սերիան և համարը)

ունի (կամ խնամում է) 3 (և ավելի) երեխա (չափահաս զավակ)

\_\_\_\_\_ (անունը, հայրանունը,

ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, ծննդյան վկայականների համարները, չափահաս զավակների

մասով ուսումնառության կամ հաշմանդամության վերաբերյալ ուսումնական հաստատության կամ ԲՄՓՀ

տեղեկանքներ տալու օրը, ամիսը, տարին, համարները, երրորդ երեխայի սաղմավորման օրվա և

հղիության ժամանակահատվածի վերաբերյալ բժշկական հաստատության տեղեկանք տալու օրը, ամիսը,

տարին, համարը, ամուսնության վկայականի օրը, ամիսը, տարին և համարը, ամուսնալուծություն գրանցած

չլինելու վերաբերյալ ՔԿՄԳ տեղեկանքի օրը, ամիսը, տարին և համարը, խնամակալ ճանաչելու մասին

որոշման օրը, ամիսը, տարին, համարը, դատական ակտի կայացման օրը, ամիսը, տարին և համարը)

**Դիմումի դարձերես**

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

3. Խնդրում եմ ինձ հատկացնել օրենքով սահմանված ամսական լրացուցիչ գումար՝ վճարումն իրականացնելով իմ անունով բանկում բացված հաշվեհամարին:

4. Ամսական լրացուցիչ գումարն ստանալու իրավունք ունեցող շահառուներն են՝

Երեխայի (չափահաս զավակի) անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման հասցեն	Երեխայի (չափահաս զավակի) կարգավիճակը	Չափահաս զավակների համաձայնությունը՝ ամսական լրացուցիչ գումարը դիմումատուին հատկացնելու կամ ցանկությունը՝ լրացուցիչ գումարի իրենց հասանելիք չափին առանձնացնելու և առանձին վճարելու վերաբերյալ	Շահառուի (շահառուների) ստորագրությունը
1	2	3	4

- 1) աղյուսակի 2-րդ սյունակում երեխայի (չափահաս զավակի) կարգավիճակը լրացվում է՝
  - ա. մինչև 18 տարեկան,
  - բ. մինչև 23 տարեկան և առկա ուսուցմամբ սովորող՝ նշվում է ուսումնական հաստատության տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը,
  - գ. 18 տարին լրացած և հաշմանդամություն ունեցող՝ նշվում է հաշմանդամության խումբը և հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ ԲՄՓՀ տեղեկանք տալու օրը, ամիսը, տարին, համարը, վերափորձաքննության օրը, ամիսը, տարին.
- 2) աղյուսակի 2-րդ սյունակում յուրաքանչյուր չափահաս զավակի մասով նշվում են՝
  - ա. «Համաձայն եմ գումարը դիմումատուին հատկացնանք» կամ
  - բ. «Ինձ հասանելիք գումարն առանձնացնել և հատկացնել ինձ».
- 3) աղյուսակի 4-րդ սյունակում յուրաքանչյուր չափահաս զավակ անձամբ ստորագրում է իր մասի դիմաց:

Դիմող \_\_\_\_\_ 20 թ.  
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

**Հավելված N 3**  
 ՀՀ կառավարության 2017 թվականի  
 փետրվարի 2-ի N 86-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԵՋ ԳՏՆՎՈՂ ԿԱՄ ԶՈՆՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԾՆՈՂԻ, ԱՍՈՒՍՆՈՒ ԵՎ (ԿԱՄ) ԶԱՎԱԿԻ (ԶԱՎԱԿՆԵՐԻ) ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԵՆՑ ՎՃԱՐԱԾ (ԻՐԵՆՑ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՀԱԾ) ԴՐՈՇՄԱՆԻՇՄԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐՆ ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ (վերնագիրը խմբ. 25.03.21 N 421-Ն)**

1. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ օրենք) համապատասխան վճարված դրոշմանիշային վճարի գումարներն օրենքով սահմանված անձանց վերադարձնելու հետ կապված հարաբերությունները:
2. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ գտնված (մահացած) զինծառայողի ծնողը, ամուսինը և (կամ) զավակը (զավակները) իրավունք ունեն յուրաքանչյուրն իր մասով օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ հատուցման հիմնադրամին ներկայացնելու դիմում՝ համաձայն N 1 ձևի, դիմումը ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում իրենց վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարներն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձնելու պահանջով: Դիմումի հետ միասին ներկայացվում են՝
  - 1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
  - 2) դիմումատուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք.
- 3) դիմումատուի զինծառայողի հետ ընտանեկան կապը հաստատող փաստաթղթի՝ համապատասխանաբար ամուսնության վկայականի և (կամ) ծննդյան վկայականի և (կամ) զինծառայողի ծննդյան վկայականի պատճենը: Ընդ



որում, սույն ենթակետում նշված ծննդյան վկայականների պատճենները դիմումատուի կողմից հատուցման հիմնադրամին ներկայացվում են միայն մեկ անգամ՝ առաջին անգամ իր վճարած (իր եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարները վերադարձնելու պահանջով հատուցման հիմնադրամ դիմելիս:

4) զինծառայողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը (զոհված (մահացած) զինծառայողի դեպքում, եթե անձը հաստատող փաստաթուղթ առկա է):

5) զինծառայողի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք (զոհված (մահացած) զինծառայողի դեպքում, եթե ստացել է հանրային ծառայությունների համարանիշ):

6) զինծառայողի՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի կամ զինվորական գրքույկը՝ դիմելու օրվա դրությամբ տարում զինծառայողի գորացրված լինելու դեպքում: Սույն ենթակետով նախատեսված տեղեկանքը տրվում է զինծառայողի գորակոչյն իրականացրած՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից՝ դիմելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

7) զոհված (մահացած) զինծառայողի դեպքում՝ մահվան վկայականի պատճենը և զինծառայողի՝ զոհված (մահացած) լինելու մասին տեղեկանք՝ համաձայն N 3 ձևի: Սույն ենթակետով նախատեսված տեղեկանքը, ինչպես նաև սույն կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը տրվում է զոհված (մահացած) զինծառայողի հաշվառումն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետում նշված համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից՝ դիմելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, զինծառայողի մահվան վկայականի պատճենը և զոհված (մահացած) լինելու մասին տեղեկանքը դիմումատուի կողմից հատուցման հիմնադրամին ներկայացվում են միայն մեկ անգամ՝ առաջին անգամ իր վճարած (իր եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարները վերադարձնելու պահանջով հատուցման հիմնադրամ դիմելիս:

8) տեղեկանք՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում իր վճարած (իր եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարների չափի մասին՝ համաձայն N 4 ձևի: Սույն ենթակետում նշված տեղեկանքը դիմելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է՝

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգերում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական ծառայությունում (այսուհետ՝ համապատասխան պետական մարմին) ծառայող (աշխատող) կամ համապատասխան պետական մարմնից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրով եկամուտ ստացող անձանց մասով՝ այն համապատասխան պետական մարմինը, որտեղ ծառայում (աշխատում) է կամ որից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրով եկամուտ է ստանում տվյալ անձը,

բ. սույն ենթակետի «ա» պարբերությունում չնշված անձանց մասով՝ հարկային մարմինը: Սույն պարբերությունում նշված տեղեկանքն ստանալու նպատակով սույն կարգի 2-րդ կետում նշված յուրաքանչյուր անձ հարկային մարմին է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք, գործատուի (հարկային գործակալի) տրամադրած տեղեկանք՝ դրոշմանիշային վճարներն աշխատողի եկամուտներից պահված լինելու վերաբերյալ ըստ ամիսների (բացառությամբ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված՝ հարկային գործակալ չհամարվող անձանցից եկամուտներ ստացող, ինչպես նաև նույն մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձանց):

*(2-րդ կետը լրաց. 13.05.21 N 775-Ն, լրաց., փոփ. 17.06.22 N 875-Ն)*

2) Եթե դիմումատուն նաև հատուցման հիմնադրամի շահառու է (հատուցման հիմնադրամը նրան որպես շահառու վճարում է հատուցման գումար), ապա սույն կարգի 2-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերում նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում:

*(2.1-ին կետը լրաց. 17.06.22 N 875-Ն)*

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դիմումը և կից փաստաթղթերը հատուցման հիմնադրամին կարող են ներկայացվել էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով՝ համապատասխանաբար www.1000plus.am կայքի կամ փոստային առաքման միջոցով: Դիմումում և (կամ) կից ներկայացվող փաստաթղթերում թերություններ և (կամ) անճշտություններ հայտնաբերելու դեպքում հատուցման հիմնադրամը դրանց ստացման օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմումատուին՝ նշելով հայտնաբերված թերությունները և (կամ) անճշտությունները: Տեղեկացումն ստանալուց հետո դիմումատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում հատուցման հիմնադրամին է ներկայացնում ճշգրտված տեղեկությունները:

*(3-րդ կետը լրաց. 17.06.22 N 875-Ն)*

4. Հատուցման հիմնադրամը դրոշմանիշային վճարի գումարները վերադարձնում է սույն կարգի 3-րդ կետի համաձայն դիմումը և կից փաստաթղթերն ստանալու օրվանից հետո մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ դիմումատուի կողմից նշված բանկին կամ բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

Ընդ որում, եթե՝

1) զինծառայողը ժամկետային պարտադիր զինվորական ծառայության է գորակոչվել կամ զոհվել (մահացել) է դիմումի

ներկայացման օրվան նախորդող օրացուցային տարվա (այսուհետ՝ հաշվետու օրացուցային տարի) ընթացքում, ապա դիմումատուին են վերադարձվում զինծառայողի պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու կամ զոհվելու (մահանալու) ամսվա 1-ից մինչև հաշվետու օրացուցային տարվա վերջին օրն ընկած ամիսների համար իր վճարած (իր եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարները:

2) զինծառայողը ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից արձակվել է հաշվետու օրացուցային տարվա ընթացքում, ապա դիմումատուին են վերադարձվում զինվորական ծառայությունից արձակվելու տարվա հունվարի 1-ից մինչև զինծառայողի զինվորական ծառայությունից արձակվելու ամսվա վերջին օրն ընկած ամիսներին իր վճարած (իր եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարները:

3) դիմումատուն որպես անհատ ձեռնարկատեր պետական գրանցում է ստացել կամ նոտարի պաշտոնում նշանակվել է կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակը դադարեցրել է կամ նոտարի պաշտոնից ազատվել է հաշվետու օրացուցային տարվա ընթացքում, ապա որպես անհատ ձեռնարկատեր կամ նոտար վճարած դրոշմանիշային վճարի գումարները վերադարձնելու դիմում ներկայացնելու դեպքում՝

ա. դիմումատուին է վերադարձվում հաշվետու օրացուցային տարվա այն ժամանակահատվածի ամիսների ընդհանուր գումարը, որոնց ընթացքում անձը հանդիսացել է անհատ ձեռնարկատեր կամ նոտար՝ հաշվի առնելով սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթները,

բ. վերադարձման ենթակա դրոշմանիշային վճարի գումարները հաշվարկվում են հաշվետու օրացուցային տարվա համար վճարած դրոշմանիշային վճարի ընդհանուր գումարը 12-ի բաժանելու և ստացված գումարն անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսանալու ամիսների թվով բազմապատկելու միջոցով:

(4-րդ կետը փոփ., լրաց. 17.06.22 N 875-Ն)

Ձև N 1

**ԴԻՄՈՒՄ**

**ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ**

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի  
սնօրեն \_\_\_\_\_ -ին

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ խնդրում եմ իրականացնել սույն դիմումը ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում իմ վճարած (իմ եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարների վերադարձ \_\_\_\_\_ չափով: Կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 3 հավելվածի 2-րդ կետով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկանքները \_\_\_\_\_ թերթից:

Հանդիսանում եմ ժամկետային զինծառայող \_\_\_\_\_-ի  
անունը \_\_\_\_\_ ազգանունը \_\_\_\_\_

ծնողը  ամուսինը  զավակը

Հանդիսանում եմ զոհված (մահացած) զինծառայող \_\_\_\_\_-ի  
անունը \_\_\_\_\_ ազգանունը \_\_\_\_\_

ծնողը  ամուսինը  զավակը

Անձնական տվյալներ

1. Ձեր անունը, ազգանունը

\_\_\_\_\_

2. Ձեր հեռախոսահամարը (պարտադիր)

[Empty rectangular box]

3. Ձեր հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը:

[Empty rectangular box]

4. Արդյո՞ք հանդիսանում եք անհատ ձեռնարկատեր (Ա/Ձ) կամ նոտար

Այո

[Empty rectangular box]

Ոչ

ՀՎՀՀ-ն

5. Ձեր բանկային հաշվի տվյալները (պարտադիր՝ սպասարկող բանկի անվանումը և հաշվեհամարը):

Ցանկանում եմ գումարն ստանալ իմ հաշվեհամարին

(հաշվեհամարը և սպասարկող բանկի անվանումը)

Ցանկանում եմ, որ գումարը փոխանցվի այլ անձի հաշվեհամարին

(ստացողի՝ հաշվետիրոջ անունը, ազգանունը)

(հաշվեհամարը և բանկի անվանումը)

Չունեմ բանկային հաշվեհամար և ցանկանում եմ գումարն ստանալ՝ ներկայացնելով իմ անձնագիրը բանկ:

(նշել նախընտրած բանկի անվանումը և հասցեն)

Դիմող՝

\_\_\_\_\_  
(ազգանունը, անունը, հայրանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թ.

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ. N \_\_\_\_\_

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ՝ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն տեղեկանքը տրվում է \_\_\_\_\_

(անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը  
(կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)

առ այն, որ \_\_\_\_\_ հանդիսացող  
վերջինիս (ծնող կամ ամուսին կամ \_\_\_\_\_  
զավակ)

(զինծառայողի անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայությունների  
համարանիշը (կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)

գտնվում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ \_\_\_\_\_ թվականի  
\_\_\_\_\_ -ից:

Զորակոչն իրականացրել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության  
գորակոչային և գորահավաքային  
համալրման ծառայության \_\_\_\_\_ տարածքային ստորաբաժանումը:

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ:

**Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գորակոչային և  
գորահավաքային  
համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման  
ղեկավար \_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը, ազգանունը)**

Կ.Տ.

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ.

\_\_\_\_\_ 20\_\_ թ. N \_\_\_\_\_

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ՝ ԶՈՂՎԱԾ (ՄԱՀԱՅԱԾ) ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն տեղեկանքը տրվում է \_\_\_\_\_

(անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)

առ այն, որ \_\_\_\_\_ հանդիսացող  
վերջինիս \_\_\_\_\_ (զավակ, ծնող, ամուսին)

(զինծառայողի անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)

գոհվել (մահացել) է \_\_\_\_\_ թվականի \_\_\_\_\_ին:

Մահվան վկայականի համարը \_\_\_\_\_

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ:

-----  
(համապատասխան պետական մարմնի  
-----  
սոցիալական ապահովության խնդիրներ  
-----  
իրականացնող ստորաբաժանման ղեկավար) (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

**Ձև N 4**

\_\_\_\_\_ 20\_\_ թ. N \_\_\_\_\_

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՆԱԽՈՐԴՈՂ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՁԻ ՎՃԱՐԱԾ (ԱՆՁԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՀԱԾ) ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ**

Սույն տեղեկանքը տրվում է \_\_\_\_\_

(անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար (այսուհետ՝ ԱՁ կամ նոտար) հանդիսանալու դեպքում՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարը)

առ այն, որ 20\_\_ թ-ի ընթացքում նրա վճարած դրոշմանիշային վճարի ընդհանուր գումարը կազմում է \_\_\_\_\_ դրամ, այդ թվում՝ \_\_\_\_\_

(թվերով և տառերով)

1) հարկային գործակալի միջով՝ \_\_\_\_\_ դրամ, որից ըստ ամիսների՝

(թվերով և տառերով)

Ամիսը											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII

2) որպես ԱԶ կամ նոտար՝ \_\_\_\_\_ դրամ:

(թվերով և տառերով)

ԱԶ պետական գրանցման կամ նոտարի պաշտոնի նշանակվելու օրը, ամիսը և տարին \_\_\_\_\_

ԱԶ կարգավիճակը դադարեցնելու կամ նոտարի պաշտոնից ազատվելու օրը, ամիսը և տարին \_\_\_\_\_

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ:

\_\_\_\_\_ (համապատասխան պետական կամ հարկային

մարմնի համապատասխան ստորաբաժանման

\_\_\_\_\_ (ղեկավար)

\_\_\_\_\_ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

(ձևը խմբ. 17.06.22 N 875-Ն)

(հավելվածը լրաց. 31.08.17 N 1077-Ն, խմբ., լրաց., փոփ. 28.12.17 N 1690-Ն, փոփ., լրաց., խմբ. 27.12.18 N 1527-Ն, խմբ. 25.03.21 N 421-Ն, լրաց., փոփ., խմբ. 17.06.22 N 875-Ն)

(25.03.21 [N 421-Ն](#) որոշումն ունի անցումային դրույթ)

Հավելված N 4

ՀՀ կառավարության 2017 թվականի

փետրվարի 2-ի N 86-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՓՈԽԱՆՑՎՈՂ՝ ԴՐՈՇՄԱՆԻՇՄԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ԴՐՈՇՄԱՆԻՇՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաշվետու ժամանակաշրջանում հարկային մարմնի կողմից դրոշմանիշային վճար վճարողների ցուցակները հատուցման հիմնադրամին փոխանցելու և հարկային մարմնի կողմից դրոշմանիշային վճարների գումարները հատուցման հիմնադրամին փոխանցելու վերաբերյալ հանձնարարական ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստը:

3. Հարկային մարմինը եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկը (բացառությամբ պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարարական ծառայության մարմինների) ստանալուց հետո առանձնացնում է այն աշխատողների թիվը, որոնց համար տվյալ ամսում հաշվեգրված (աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի դեպքում վճարված) են եկամուտներ: Եթե այդ աշխատողների դրոշմանիշային վճարների գումարն ամբողջությամբ փոխանցված է համապատասխան գանձապետական հաշվեհամարին, ապա հարկային մարմինն այդ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում սույն կետում նշված աշխատողների ցուցակը՝ համաձայն N 1 ձևի, տրամադրում է հատուցման հիմնադրամին:

**(3-րդ կետը լրաց. 31.08.17 N 1077-Ն, փոփ. 28.06.18 N 726-Ն)**

4. Աշխատանքային կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերով հարկային գործակալ չհամարվող անձանցից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական պարզեցված հաշվարկի հիման վրա հարկային մարմինը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար առանձնացնում է դրոշմանիշային վճարների գումարն ամբողջությամբ փոխանցած անձանց և այդ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում սույն կետում նշված ֆիզիկական անձանց ցուցակը՝ կազմված սույն կարգի N 1 ձևի համաձայն, տրամադրում է հատուցման հիմնադրամին:

5. Ծառայատերի հաշվարկի և (կամ) շրջանառության հարկի հաշվարկի և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության հիման վրա հարկային մարմինը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար առանձնացնում է դրոշմանիշային վճարների գումարն ամբողջությամբ փոխանցած անհատ ձեռնարկատերերին ու նոտարներին և այդ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում սույն կետում նշված դրոշմանիշային վճարներն ինքնուրույն վճարողների ցուցակը՝ կազմված սույն կարգի N 1 ձևի համաձայն, տրամադրում է հատուցման հիմնադրամին:

**(5-րդ կետը փոփ. 28.06.18 N 726-Ն, խմբ. 25.03.21 N 421-Ն)**

6. Եթե սույն կարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված անձանց մասով դրոշմանիշային վճարները փոխանցված են մասամբ, ապա

1) տվյալ գործատուի կողմից մասամբ վճարված դրոշմանիշային վճարների գումարը գանձապետարանի կողմից փոխանցվում է հատուցման հիմնադրամին.

2) հարկային մարմինն այդ մասին տեղեկացնում է հատուցման հիմնադրամին և ձեռնարկում է օրենքով սահմանված անհրաժեշտ միջոցներ՝ չվճարված դրոշմանիշային վճարների գումարը հավաքագրելու համար, որից հետո նշված անձանց ցուցակը՝ կազմված սույն կարգի N 1 ձևի համաձայն, տրամադրում է հատուցման հիմնադրամին:

7. Սույն կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ցուցակները հարկային մարմնի կողմից հատուցման հիմնադրամին կարող են տրամադրվել Ընդարձակ նշման լեզվի (XML) ձևաչափով՝ ներառելով սույն կարգի N 1 ձևում սահմանված տվյալները:

**(7-րդ կետը խմբ. 25.03.21 N 421-Ն)**

8. Հարկային մարմինը դրոշմանիշային վճարներ կատարող անձանց կողմից (օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի միջոցով) դրոշմանիշային վճարների ամբողջ գումարը վճարելուց և սույն կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված ցուցակները կազմելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին է ներկայացնում դրոշմանիշային վճարները հատուցման հիմնադրամին փոխանցելու վերաբերյալ հանձնարարական՝ համաձայն N 2 ձևի:

8.1. Հարկային մարմինը պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության հանրապետական գործադիր մարմիններից, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարարական մարմինների կողմից առանձնացված հաշվառման նպատակով բացված համապատասխան գանձապետական հաշվեհամարին փոխանցված դրոշմանիշային վճարների մասով, ընթացիկ տարվա հունվար ամսվա ընթացքում ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին է ներկայացնում դրոշմանիշային վճարները հատուցման հիմնադրամին փոխանցելու վերաբերյալ փոխանցման ամփոփ հանձնարարական, որի համաձայն տվյալ հաշվին մուտքագրված գումարները յուրաքանչյուր գործառնական օրվա ավարտին փոխանցվում են հատուցման հիմնադրամին:

**(8.1-ին կետը լրաց. 31.08.17 N 1077-Ն)**

8121 Մասնկության գործընթացում գտնվող գործատուին դատարանի վճռի հիման վրա լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման, նոտարի պաշտոնից ազատման) կապակցությամբ սնանկության գործընթացի ավարտի դեպքում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնում պարտապան գործատուի լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) պետական գրանցման վերաբերյալ տվյալները հարկային մարմնի կողմից ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում դրոշմանիշային վճարի չկատարված պարտավորությունը դադարեցվում և հաշվառումից հանվում է (համարվում է մարված), իսկ մասնակի փոխանցված դրոշմանիշային վճարների գումարների մասով հարկային մարմինը նույն ժամկետում ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին է ներկայացնում դրոշմանիշային վճարները հատուցման հիմնադրամին փոխանցելու վերաբերյալ փոխանցման ամփոփ հանձնարարական:

Սույն կետում նշված դեպքում հարկային մարմինը հատուցման հիմնադրամին ֆիզիկական անձանց ցուցակներ չի տրամադրում:

**(8.2-րդ կետը լրաց. 16.09.21 N 1499-Ն)**

9. Հարկային մարմինը սույն կարգով սահմանված հանձնարարականում որպես փոխանցման ենթակա դրոշմանիշային վճարների գումար նշում է (բացառությամբ սույն կարգի 812-րդ կետի) վճարված դրոշմանիշային վճարների այն գումարը, որը հավասար է դրոշմանիշային վճարներ կատարող անձանց՝ դրոշմանիշային վճարների կատարման գծով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար պարտավորության չափին:

**(9-րդ կետը լրաց. 16.09.21 N 1499-Ն)**

10. Սույն կարգով սահմանված հանձնարարականներն ստանալու օրվանից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը հատուցման հիմնադրամի հատուկ հաշվին է փոխանցում հանձնարարականներում նշված գումարը:

**(10-րդ կետը փոփ. 31.08.17 N 1077-Ն)**

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

Ձև N 1

**ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

Հարկային մարմնից տրամադրվող տեղեկատվությունը				
Ամսաթիվը				
Հանձնարարականի հերթական համարը				
ՀՎՀՀ-ն				
Ա/Ձ, նոտարի, կազմակերպության անվանումը				
ՀԾՀ-ն	Անունը	Ազգանունը	Հաշվետու ժամանակաշրջանը	Դրոշմանիշային վճարի գումարը

**(ձևը խմբ. 25.03.21 N 421-Ն)**

Ձև N 2

**ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ**



Տվյալի անվանումը	Ձևաչափը
Հանձնարարականի հերթական համարը	
Գանձապետական հաշվեհամարը	
Փոխանցման ենթակա գումարը	

(*հավելվածը լրաց., փոփ. 31.08.17 N 1077-Ն, փոփ. 28.06.18 N 726-Ն, խմբ. 25.03.21 N 421-Ն, լրաց. 16.09.21 N 1499-Ն*)

Հավելված N 5  
22 կառավարության 2017 թվականի  
փետրվարի 2-ի N 86-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ԴՐՈՇՄԱՆԻՇՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՄՆԵՐԻ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են դրոշմանիշային վճարների պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարները վերադարձնելու հետ կապված հարաբերությունները:

2. Համապատասխան գանձապետական հաշվեհամարին փոխանցված դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները ենթակա են վերադարձման հարկային գործակալի կամ դրոշմանիշային վճարներն ինքնուրույն վճարողների (այսուհետ՝ վճարող) հարկային մարմին ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն ԴՎ N 1 ձևի:

2.1. Անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից հարկային մարմին ներկայացված ճշտված հաշվարկների հիման վրա առաջացած՝ դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները հատուցման հիմնադրամին փոխանցված լինելու դեպքում հարկային մարմինը, հատուցման հիմնադրամի հետ փոխհամաձայնեցված ոչ ինքնաշխատ էլեկտրոնային եղանակով, սույն կետում նշված անձանց (այդ թվում՝ վերջիններիս հարկ վճարողի հաշվառման համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը) և դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է հատուցման հիմնադրամին: Հատուցման հիմնադրամը սույն կետում նշված տեղեկատվությունն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները փոխանցում է համապատասխան գանձապետական հաշվեհամարին՝ բացառությամբ սույն կարգի 2I2-րդ կետում նշված դեպքի:

*(2.1-ին կետը լրաց. 01.09.22 N 1368-Ն)*

2I2I Հատուցման հիմնադրամը սույն կարգի 2I1-ին կետում նշված անձանց կողմից վճարված դրոշմանիշային վճարները Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 3 հավելվածով սահմանված կարգով վերադարձրած լինելու դեպքում դրա մասին տեղեկատվությունը սույն կարգի 2I1-ին կետում նշված ժամկետում տրամադրում է հարկային մարմին՝ դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները վերահաշվարկելու համար:

*(2.2-րդ կետը լրաց. 01.09.22 N 1368-Ն)*

3. Վերադարձն իրականացվում է դրոշմանիշային վճարների պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարի մնացորդի այն մասով, որն օրենքով սահմանված պահանջներին և սույն կարգին համապատասխան հարկային մարմնի կողմից համարվել է վերադարձման ենթակա:

4. Վերադարձման ներկայացված գումարը համարվում է չհիմնավորված և վճարողի դիմումը մերժվում է, եթե հարկային մարմնում առկա տվյալների համադրման արդյունքում պարզվում է, որ սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարի գումարի մնացորդ առկա չէ: Դրոշմանիշային վճարի գումարի առկա մնացորդը վերադարձման ներկայացված գումարի չափից պակաս լինելու դեպքում վերադարձման ենթակա կհամարվի առկա մնացորդի չափով:

Սույն կետում նշված դեպքում վճարողին տեղեկացվում է վերադարձը չկատարելու (վերադարձը մերժվելու) մասին՝ նշելով վերադարձի մերժման հիմքը, իսկ դրոշմանիշային վճարի գումարի ոչ բավարար մնացորդի առկայության դեպքում՝ տեղեկացվում է վերադարձման ենթակա գումարի մասին:

5. Հարկային մարմինը վճարողից սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա

ընթացքում կազմում է սահմանված չափից ավելի վճարված գումարի վերադարձման մասին եզրակացություն՝ համաձայն ԴՎ N 2 ձևի:

6. Վերադարձը մերժելու հիմքի բացակայության դեպքում՝ հարկային մարմինը եզրակացությունների հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին է ներկայացնում վճարողների ավելի վճարված դրոշմանիշային վճարների գումարների վերադարձի մասին ամփոփ տեղեկանք՝ համաձայն ԴՎ N 3 ձևի:

7. Ֆինանսների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը վճարողների սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարների գումարների վերադարձի մասին ամփոփ տեղեկանքն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է գումարների վերադարձը:

8. Դրոշմանիշային վճարների սահմանված չափից ավելի վճարված գումարների վերադարձը կատարվում է «Դրոշմանիշային վճարներ» գանձապետական հաշվեհամարից վճարողի բանկային հաշվին վերադարձման ենթակա գումարի փոխանցման միջոցով: Եթե դրոշմանիշային վճար վճարող ֆիզիկական անձը բանկային հաշիվ չունի, ապա գումարը փոխանցվում է նրա առաջարկած առևտրային բանկ՝ նրա անձնագրի (նույնականացման քարտի) տվյալներով, ընդ որում, այդ դեպքում «Վճարողի սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարի գումարների մնացորդի վերադարձի դիմում» ԴՎ N 1 ձևի, «Վճարողի սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարի գումարի մնացորդի վերադարձման մասին եզրակացություն» ԴՎ N 2 ձևի և «Վճարողների սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարի գումարների մնացորդների վերադարձի մասին ամփոփ տեղեկանք» ԴՎ N 3 ձևի «Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը» սյունակում նշվում է անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը:

Ձև ԴՎ N 1

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՎՃԱՐՈՂԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԶԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ

ՀՎՀՀ

(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի, հարկային գործակալ չհամարվողից եկամուտ ստացած ֆիզիկական անձի անունը, ազգանունը)										
--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Խնդրում եմ դրոշմանիշային վճարի սահմանված չափից ավելի վճարված գումարի մնացորդից վերադարձնել գումարը:

Բանկը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը (անձնագրի սերիան և համարը/նույնականացման քարտի համարը)	Վերադարձման ենթակա գումարը

Դիմումի ներկայացման ամսաթիվը \_\_\_\_\_ 20\_\_\_\_ թ.

Դիմումատու  
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

Հարկ  
վճարողի կնիքը՝  
(առկայության դեպքում)

Ձև ԴՎ N 2



							Ընդամենը

Հարկային մարմնի պատասխանատու անձ

\_\_\_\_\_ (անունը, ազգանունը և ստորագրությունը)

Մ. Տ.

*(հավելվածը լրաց. 31.08.17 N 1077-Ն, 01.09.22 N 1368-Ն)*